Վեստ Սարգըսեան կ’ըլլար խըլան խոստացուած,
Քու բալլիքներդ Վոսփորի բանտին մէջ
Երիտասարդ թագաւորիդ թեւերուն
Կուռ շըղթաներ կըղպեցին:

Բ

Ո՛վ պատուհաս. կորսըւեցար դու այլեւս
Երբ Պարսն եւ Յոյնն, երկու ոսոխ ոսոխներդ,
Իրարու դէմ ըզքեզ ասպար կանգնեցին,
Կամ իբրեւ որս մ’որ արդէն իր մագիլով
Նախ իր սիրտն է խոցոտեր,
Քեզ անցուցին Մոնոմախոսն ու Տուղրիլ,
Պերոզն ու ժանտ Ալփասլան՝
Ժանիքներէ ժանիք, թաթէ ի թաթուլ.
Եւ, դէմ դիմաց կզակներն իրենց ջարդելով,
Հիմնաքարերդ հանեցին՝
Որպէսզի սեւ դամբանաքարդ յօրինեն:
Ա՛լ այն օրէն դու իբրեւ շէնք մ’հոյակապ՝
Ուրկէ հազար կայծակ մէկէն է անցեր՝
Քայքայուեցար մարմար մարմար, ծեփ առ ծեփ:
Ու, ո՛վ ցասում, ո՛վ ամօթ,
Քեզ դէմ առ դէմ բըզըկտողները նենգժոտ
Չեղան արծիւ՝ այլ գայլե՛ր…

Գ

Արդ քարուքանդ կը հանգչիս
Եւ նըշխարներդ ինը դար է որ կ’ապրին.
Ժամանակին ձեռքը չեղաւ այնքան յաղթ
Աճիւններդ այդ մըրրիկներուն յանձնելու.
Բայց ծոցիդ մէջ ալ բընա՛ւ